

**ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ N 21/8

ք.Երևան

10 ապրիլի 2018թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ Ա/Ձ Արթուր Մովսիսյանի դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

Ա/Ձ Արթուր Մովսիսյանը հայտնում է, որ 2018թ. հունվարի 16-ին լրացրել է թվով 4 հատ հաշվետվություններ, ինչպես նաև 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը: Նշված հաշվետվությունները և հայտարարությունն էլեկտրոնային եղանակով ստորագրվել են և ուղարկվել են ՀՀ ԿԱ ՊԵԿ, որից հետո 16.01.2018թ. հանձնելով ՀՀ ԿԱ ՊԵԿ-ին ըստ ժամերի պահպանել է անավարտ հաշվետվությունների բաժնում: Սակայն մարտի սկզբերին Ա/Ձ Արթուր Մովսիսյանին տեղեկացրել են, որ հանդիսանում է ԱԱՀ վճարող և պետք է ներկայացնի ԱԱՀ-ի հաշվարկ:

Ա/Ձ Արթուր Մովսիսյանը հայտնում է նաև, որ գործունեություն է իրականացնում Սևան քաղաքում, տարեկան իրացման շրջանառությունը չի գերազանցում 58 մլն դրամը, ժամանակին ներկայացնում է բոլոր հաշվետվությունները և վճարում հարկային պարտավորությունները:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Արթուր Մովսիսյանը խնդրում է վերականգնել 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

Ա/Ձ Արթուր Մովսիսյանը 2017թ. ընթացքում հանդիսացել է շրջանառության հարկ վճարող: 2018թ. հունվարի 16-ին Ա/Ձ Արթուր Մովսիսյանը ստեղծել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարարությունը, սակայն իրեն փաստացի չի հաջողվել այն ուղարկել: Ընդ որում, շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարարությունը սահմանված ժամկետում ներկայացված չլինելու մասին Ա/Ձ Արթուր Մովսիսյանը տեղեկացել է միայն 2018թ. մարտ ամսին: Արդյունքում, Ա/Ձ Արթուր Մովսիսյանը գրկվել է 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու հնարավորությունից:

3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

ՀՀ Հարկային օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 254-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շրջանառության հարկ վճարողներ են համարվում (անկախ բացառապես արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակներ իրականացնելու հանգամանքից) նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանը բավարարող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը

և նոտարները (բացառությամբ նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի) հետևյալ դեպքերում և ժամկետներում.

1) տվյալ հարկային տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե հարկ վճարողը մինչև տվյալ հարկային տարվա փետրվարի 20-ը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ շրջանառության հարկ վճարող կարող են համարվել այն ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը և նոտարը, որոնց նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը չի գերազանցել 58.35 միլիոն դրամը:

Միևնույն ժամանակ, Օրենսգրքի 455-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենսգրքի 59-րդ և 254-րդ հոդվածներով սահմանված՝ նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 58.35 միլիոն դրամի շեմը, ինչպես նաև Օրենսգրքի 255-րդ հոդվածով սահմանված՝ ընթացիկ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 58.35 միլիոն դրամի շեմը գործում է 2019 թվականի հունվարի 1-ից, իսկ 2018 թվականի ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության ԱԱՀ-ի շեմը սահմանվում է 115 միլիոն դրամ:

Իր հերթին, Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված են այն վավերապայմանները, որոնց առկայության պայմաններում տնտեսվարող սուբյեկտը չի կարող համարվել շրջանառության հարկ վճարող:

Քննարկվող դեպքում ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տվյալների համաձայն Ա/Ձ Արթուր Մովսիսյանը բավարարում է Օրենսգրքով նախատեսված բոլոր պահանջներին 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու համար:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ա/Ձ Արթուր Մովսիսյանը մինչև 2018թ. փետրվարի 20-ը ստեղծել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը, սակայն իրեն փաստացի չի հաջողվել էլեկտրոնային եղանակով այն ուղարկել, Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է հնարավորություն ընձեռել Ա/Ձ Արթուր Մովսիսյանին ներկայացնել հայտարարություն՝ 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու համար:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ա/Ձ Արթուր Մովսիսյանի բողոքը բավարարել:
2. Ա/Ձ Արթուր Մովսիսյանի կողմից շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացվելու դեպքում 2018թ. համարել շրջանառության հարկ վճարող:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ